14974

ՀԱՍՏԱՏՈՒՄ ԵՄ՝
Շրջակա միջավայրի նախարար
Հ. Սիմիդյան

«27» 12 2021թ.

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

ԲՓ 0230-21

Ձեռնարկողը՝ ***«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ***
Ք. Երևան, Արմենակյան 127

Գործունեությունը՝ ***Սևան քաղաքում (Սևանի թերակղզու հատված) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն***
Գեղարքունիքի մարզ

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենի պարտականությունները կատարող՝ Խ. Մարտիրոսյան

Առդիր եզրակացությունը՝ 5 թերթ

ՊԵՏԱԿԱՆ ՓՈՐՁԱՔՆՆԱԿԱՆ ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

ՇՐՋԱԿԱ ՄԻՋԱՎԱՅՐԻ ՎՐԱ ԱԶԴԵՑՈՒԹՅԱՆ ՓՈՐՁԱՔՆՆՈՒԹՅԱՆ

թիվ ԲՓ 0230-21

«27» 12 2021թ.

Սևան քաղաքում (Սևանի թերակղզու հատված) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն

Ներածական մաս.

Ձեռնարկող՝	«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ
Փաստաթղթի տեսակը՝	Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվություն /ՇՄԱԳ/ /Բ կատեգորիա/
Տեղադրման վայրը՝	Գեղարքունիքի մարզ, Սևան քաղաք

Համաձայն գնահատման հաշվետվության նախագիծը կատարվել է «Հայաստանի Էլեկտրական Ցանցեր» ՓԲԸ-ի կողմից 2019թ. մարտի 7-ն տրված № 41757111 էլեկտրական ցանցին միացման պատվերի հիման վրա: Նախագծի նպատակն է Սևան քաղաքի թերակղզու տարածքում քաղաքացի Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարումը:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության մասին» ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն նախատեսվող գործունեությունն իրականացվել է «Բ» կատեգորիայի ընթացակարգով, քանի որ իրականացվելու է բնության հատուկ պահպանվող տարածքում:

Նկարագրական մաս.

Համաձայն հաշվետվության նախատեսվող գործունեության ենթակա տարածքը գտնվում է կենտրոնական գոտում, որը ներառում է «Սևան» ազգային պարկի, Սևանա լճի ջրային սահմանից մինչև 1905.0 մետր բացարձակ նիշը: Նոր հենարանների տեղադիրքը տատանվում է 1903.5 -1904.5մ բացարձակ նիշերի միջև:

Համաձայն ՀՀ կառավարության 24 սեպտեմբերի 2001թ. «Ոչ հիմնական շինությունների տեղադրման կարգը հաստատելու մասին» թիվ 896 որոշման 2-րդ կետի՝ Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22 կՎտ էլեկտրամատակարարման նախատեսվող գործունեությունը հանդիսանում է ոչ հիմնական շինություն, հողի մեջ չունի հիմքեր, չեն պահանջվում թաց շինարարական պրոցեսներ և անհրաժեշտության դեպքում կարող են անջատվել հողից՝ առանց էական վնաս հասցնելու հողի ծածկույթին:

Համաձայն «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ գրության նախատեսվող օդային գիծը ներառված է ՀԷՑ-ի հաշվեկշռում: Սևանա լճի ջրի մակարդակի բարձրացման դեպքում, տեղադրվող հենասյուները /որպես ոչ հիմնական կառույց/ կապամոնտաժվեն և կտեղափոխվեն ընկերության կողմից:

Համաձայն տեխնիկական պայմանի՝ սպառողին պատկանող տարածքի էլեկտրամատակարարումը նախատեսվում է իրականացնել Սևանի թիվ S 7380 ԼՏԵ-ից սնվող

«Արտաշ Գրիգորյան» ճյուղավորման 0.4 կՎ ցածր լարման ՕԳՄ-ի վերջնային հենարանից՝ կառուցելով 0.4 կՎ և 0.22 կՎ ՕԳՄ՝ նախապես փոխարինելով տեղակայված 25/10 կՎԱ հզորության ուժային տրանսֆորմատորը 100/10 կՎԱ հզորությամբ:

Նախագծվող 0.4կՎ ՕԳՄ-ի երկարությունը կազմում է 62մ, իսկ բաժանորդի սնուցման 0.22կՎ ՕԳՄ-ի երկարությունը՝ 26մ, որից 10մ օդային հատված, 16մ-ը №2 հենասյան երկայնքով: Հենարանների տեղադրման խորությունը կազմում է 2.5 մ, հենարանների քանակը 2 է, ընդհանուր երկակությունը 8մ:

Ըստ հաշվետվության հետագայում ևս 11 սպառման համակարգ հնարավոր է միացնել նոր կառուցվող գծին:

0.4կՎ լարման ՕԳՄ-ի համար, համաձայն հաշվարկի, ընտրվել է СИП-2 3x35+1x54.6մմ², իսկ 0.22կՎ-ի համար՝ СИП-2 2x16մմ²: Վերջիններս ընտրվել են ըստ թույլատրելի հոսանքի, ստուգվել ըստ լարման անկման և շեղման:

Նախագծվող 0.4կՎ ՕԳՄ-ի СИП-2 3x35+1x54.6մմ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարը սկիզբ է առնում ԼՏԵ 7380-ի 0.4կՎ ցածր լարման ՕԳՄ-ի գոյություն ունեցող №1' ե/բ հենարանից, ապա մոնտաժվում է №1÷2 նոր տեղադրվող ե/բ հենարաններով: №2 հենարանից СИП-2 2x16մմ² կտրվածքի մեկուսացված հաղորդալարերով 0.22կՎ ՕԳՄ-ն ուղիղ թռիչքով ամրանում է բաժանորդի կողմից տեղադրվող մետաղական կանգնակին:

Էլեկտրամատակարարման գծի կառուցման աշխատանքները նախատեսվում է իրականացնել 28 օրում: Աշխատանքների իրականացման համար նախատեսվում է կիրառել հետևյալ տեխնիկական միջոցները՝ ավտոկռունկ, ավտոամբարձիչ, բեռնատար մեքենաներ, ինչպես նաև ձեռքի մեխանիկական գործիքներ և այլն:

Գործունեության տարածքում հողային աշխատանքներ կատարվելու են ընդամենը 3մ² մակերեսի վրա 2 հենարանների համար փոսորակների փորման համար:

Համաձայն հաշվետվության աշխատանքների իրականացման ընթացքում օդային գծի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ օդային գծի անցկացման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր, որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են և հիմնականում օգտագործվում են բնակելի և անտառապատ գոտիներում օդային գծերի անցկացման համար:

Ընդհանուր առմամբ հողային աշխատանքների տևողությունը ըստ աշխատանքային նախագծի ժամանակացույցի կազմում է 7 օր: Շինարարական տեխնիկայի աշխատանքների ընթացքում իրականացվելու է տեղանքի հարթեցում, հանվող հողային զանգվածի և առաջացած թափոնների տեղափոխում:

Համաձայն հաշվետվության հենարանների համար հարթակներ չեն նախատեսվում, հենարանները միականգնակ են, հենարանները տեղադրվելու են գոյություն ունեցող համայնքային ճանապարհի եզրին, նոր ճանապարհներ չեն նախատեսվում, հանվող բուսահողի ծավալը կազմում 0.5մ³, բուսահողի պահպանման համար լրացուցիչ պահպանման և կուտակման միջոցառումներ չեն նախատեսվում, այն տեղում օգտագործվելու է ճանապարհի եզրի բաց տարաքծների բարեկարգման նպատակով:

Գործունեության իրականացման ընթացքում մթնոլորտի հիմնական աղտոտիչներն են՝ շինարարական տեխնիկայի և տրանսպորտային միջոցների շահագործման ընթացքում առաջացող գազանման արտանետումները և անօրգանական փոշին: Հենարանների տեղադրման աշխատանքների ընթացքում մթնոլորտային արտանետումները շարժական, չկազմակերպված աղբյուրներից են: Շինարարության ընթացքում վնասակար նյութերի արտանետումների քանակները փոքր են և չեն կարող ազդել մոտակա բնակավայրերի մթնոլորտային օդի որակի վրա:

Համաձայն հաշվետվության աշխատանքների ժամանակ աղտոտված կեղտաջրերի արտահոսք դեպի ջրային ռեսուրսներ չեն իրականացվելու:

Շինարարության արդյունքում գոյացող թափոնները տարանջատվելու են ընդհանուր աղբից և կենցաղային թափոններից դեռ շինհրապարակում, և ըստ առաջացման կտեղափոխվելու են հատուկ հատկացված աղբավայր:

Շինարարության ընթացքում բանվորական և ԻՏԱ անձնակազմի կոմունալ-կենցաղային կարիքները հոգալու նպատակով շինհրապարակը կահավորվելու է ժամանակավոր բիոզուգարանով, հանգստի սենյակով և ավտոմեքենաների անվադողերի լվացման կետով: Տեխնիկական որակի ջրի մատակարարումը կիրականացվի ավտոցիստերնով, պայմանագրային հիմունքներով:

Շինարարական աշխատանքների ընթացքում օգտագործվող շինանյութը կպահեստավորվի շինհրապարակում, հատուկ նախատեսված վայրում, ծածկի տակ:

Շինարարական տեխնիկայի համար համապատասխան վառելիքի լիցքավորումը և յուղումմ իրականացվելու է մասնագիտացված լցակայաններում կամ սպասարկման կետերում:

Շինարարության ընթացքում բնառեսուրսներից օգտագործվելու է ջուր՝ տարածքների, հանվող գրունտի ջրցանի, շինանձնակազմի խմելու և կենցաղային կարիքների համար: Շինարարության ժամանակահատվածի համար ընդհանուր ջրօգտագործումը հաշվարկվել է ըստ սպասարկող աշխատողների թվաքանակի (12 մարդ), ինչը կազմում է 7.896մ^3/շին. ժամ. կամ 0.282 մ^3/օր: 500մ^2 ջրցանի համար օգտագործվող ջրի ծախսը կկազմի 28.896մ^3/շին. ժամ: Ընդամենը ջրօգտագործումը կկազմի 4242մ^3/շին.ժամ:

Աշխատանքների իրականացման ընթացքում օդային գծի ուրվագծով ծառահատումներ իրականացնելու անհրաժեշտություն չի առաջանա, քանի որ օդային գծի անցկացման համար օգտագործվելու են ինքնակիր մեկուսացված հաղորդալարեր, որոնք մեկուսիչ թաղանթով և բարձր անվտանգությամբ օժտված հաղորդալարեր են և հիմնականում օգտագործվում են բնակելի և անտառապատ գոտիներում օդային գծերի անցկացման համար:

Հաշվետվությունում նախատեսվող գործունեության համար դիտարկվել են այլընտրանքային տարբերակներ, ընտրված տարբերակը բնապահպանական և ֆինանսատնտեսական տեսանկյունից եղել է նպատակահարմարը:

Նախատեսվող գործունեության շրջակա միջավայրի վրա ազդեցությունները հիմնականում կապված են լինելու՝ քանդման, փորման, բեռնման, հողային աշխատանքների, թափոնների տեղափոխման, շինարարական տեխնիկայի, մեխանիզմների շահագործման, ճանապարհների ծանրաբեռնվածության, արտակարգ իրավիճակների առաջացման հետ:

Համաձայն գնահատման հաշվետվության նախատեսվում են օդային ավազանի, հողային և ջրային ռեսուրսների աղտոտումից պահպանման, դրանց արդյունավետ օգտագործման, թափոնների կառավարման, աղմուկի մակարդակի, արտակարգ իրավիճակների ռիսկի նվազեցմանն ուղղված բնապահպանական միջոցառումներ, որոնք ներառված են միջոցառումների ծրագրում և մոնիթորինգի պլանում: Այդ թվում՝

Օդային ավազանն աղտոտումից պահպանելու համար նախատեսված են՝

- շինարարական աշխատանքների /փոշի առաջացման աշխատանքների ընթացքում իրականացվելու է ջրցան,
- սորուն նյութերի պահեստները ծածկել համապատասխան բարձրությամբ թաղանթով, ինչը կանխարգելում է փոշու տարածումը,
- պարբերաար ստուգել շինարարական տեխնիկայի և փոխադրամիջոցների տեխնիկական վիճակը և իրականացնել կարգաբերում,

- գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել «ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N 57 որոշման դրույթներով, բացառելով Սևանա լճի էկոհամակարգի վրա բացասական ազդեցություն ունեցող նյութերի կիրառումը,
- ջրցանի ծավալները հաշվարկվում են այնպես, որ չառաջանան մակերևութային հոսքեր և ջուրը բավականացնի միայն փոշենստեցման համար,
- շինարարական աշխատանքների ընթացքում հանվող բնահողը համաձայն աշխատանքային նախագծի օգտագործվելու է որպես ետլիցք,
- շինարարական նյութերի և քսայուղերի պահեստները կտեղադրվեն բետոնապատ մակերեսի վրա,
- աշխատանքների ավարտից հետո կմաքրվեն բոլոր տարածքները և առաջացած թափոնները կտեղափոխվեն ինքնակառավարման մարմնի կողմից հատկացված աղբավայր,
- աղմուկի մակարդակը նվազեցնելու համար նախատեսվում է շինարարական աշխատանքները և տրանսպորտի տեղաշարժը կազմակերպել ցերեկային ժամերին,
- շինարարական աղբը պետք է պատշաճ կերպով հավաքվի և հեռացվի արտոնագիր ունեցող աղբահավաքների կողմից,
- շինարարական աշխատանքների ժամանակ շրջակա միջավայրը և գործունեության տարածքը զերծ է պահվելու թափոնների կուտակումներից, բացառվելու է տարածքում թափոնների բաց այրումը,
- գործունեության տարածքում ընկերության կողմից կատարվելու է մոնիթորինգ, առաջնորդվելով ՀՀ կառավարության 31.07.2014թ. «ՀՀ բուսական աշխարհի օբյեկտների պահպանության և բնական պայմաններում վերարտադրության նպատակով դրանց օգտագործման կարգը սահմանելու մասին» N781-Ն որոշման պահանջներով,
- շինարարության ընթացքում պահպանվելու են արտակարգ իրավիճակների և աշխատանքի անվտանգության նորմերը և այլն:

Համաձայն հաշվետվության՝ գործունեության իրականացման ընթացքում միջոցառումների կատարման վերահսկողությունն իրականցվելու է «Սևան» ազգային պարկ» ՊՈԱԿ-ի կողմից:

Դիտարկվող տարածքում և նրա հարակից տարածքներում արդեն իսկ առկա է մարդկային գործոնը, առկա է կառուցապատում, տրանսպորտային երթևեկություն, մեքենաների շարժ և աղմուկ, ինչի պարագայում կենդանատեսակների հանդիպելը քիչ հավանական է: Ըստ նախնական գնահատումների նշված տարածքում թե կենդանական, և թե բուսական աշխարհի ներկայացուցիչների վրա ազդեցություն չի լինելու: Այդ իսկ պատճառով լրացուցիչ կենսաբազմազանության մշտադիտարկումներ չի նախատեսվում:

Սոցիալական ազդեցության տեսանկյունից նախատեսվող գործունեությունը դրական է, քանի որ հետագայում հնարավորություն է ստեղծվելու ևս 11 բաժանորդի էլեկտրամատակարարման ապահովումը: Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում հնարավոր սոցիալական կարճաժամկետ ազդեցությունների (երթևեկության սահմանափակում, անվտանգություն և այլ սոցիալական ազդեցություններ) նվազեցման համար նախատեսվել են մեղմացնող միջոցառումներ, օրինակ՝ աշխատանքների իրականացում ոչ հանգստյան ժամանակահատվածում:

Հաշվետվությունում նախատեսվել են նաև միջոցառումներ, որոնք ուղղված են՝ աշխատանքի անվտանգությանը, արտակարգ իրավիճակների ռիսկերը նվազեցնելուն: Բնապահպանական միջոցառումների իրականացման համար ՇՄԱԳ-ում նախատեսվել են բնապահպանական վճարներ:

Պատճառաբանական եզրահանգումներ. Շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման և փորձաքննության գործընթացներում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով

Գեղարքունիքի մարզի Սևան համայնքում իրականացվել են հանրային իրազեկումներ և քննարկումներ: Փորձաքննության ընթացքում հաշվետվությունը շրջակա միջավայրի նախարարության դիտողություններով ու առաջարկություններով լրամշակվել է:

Փորձաքննական գործընթացին ներգրավվել են շրջակա միջավայրի նախարարության ստորաբաժանումները, առողջապահության, արտակարգ իրավիճակների, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարությունները, քաղաքաշինության կոմիտեն, ԳԱԱ Սևանա լճի պահպանության փորձագիտական հանձնաժողովը, Գեղարքունիքի մարզպետարանը, Սևանի համայնքապետարանը:

Ամփոփելով պետք է նշել, որ գործունեության իրականացման արդյունքում շրջակա միջավայրի վրա ազդեցությունները լինելու են ժամանակավոր և տեղայնացված բնույթի՝ պայմանավորված շինարարության կարճատև ժամանակահատվածով: Նախագծի իրականացումը հնարավորություն կտա ապահովել էլեկտրամատակարարում ոչ միայն Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի համար, այլ նաև հնարավորություն կտեղծվի ապահովել էլեկտրամատակարարում ևս 11 բաժանորդների համար:

Փորձաքննական պահանջներ

1. Շինարարական աշխատանքների իրականացման ընթացքում անհրաժեշտ է հետևել գնահատման հաշվետվությունում ամրագրված բնապահպանական միջոցառումների կատարմանը, ժամանակացույցին, իսկ դրանց չբավարարման դեպքում նախատեսել լրացուցիչ միջոցառումներ՝ ուղղված բնապահպանական և շինարարական նորմերի պահպանմանը:
2. Գործունեությունն իրականացնելիս անհրաժեշտ է առաջնորդվել «Բնության հատուկ պահպանվող տարածքների մասին» ՀՀ օրենքի և ՀՀ կառավարության՝ 29.01.2010թ. «ՀՀ բույսերի և կենդանիների Կարմիր գիրքը հաստատելու մասին» N71-Ն և N72-Ն և 31.07.2014թ. N781-Ն որոշումների պահանջներով:
3. Գործունեության իրականացման ընթացքում առաջնորդվել ՀՀ կառավարության 2002թ. հունվարի 24-ի N57 որոշման պահանջներով, բացառել՝ Սևանա լճի աղտոտումը, վտանգավոր նյութերի, կեղտաջրերի ներթափանցումը, ջրային ռեսուրսի որակական հատկությունների փոփոխումը:
4. Հենարանների տեղադրումն իրականացնել հաշվետվությունում նշված ձևով՝ բացառելով թաց շինարարական պրոցեսները /բետոնի շաղախի օգտագործումը/:
5. Գործունեության մեկնարկը համաձայնեցնել «Սևան» ԱՊ ՊՈԱԿ-ի հետ:

ԵԶՐԱՓԱԿԻՉ ՄԱՍ

«Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ կողմից ներկայացված Գեղարքունիքի մարզի, Սևան քաղաքում (Սևանի թերակղզու հատված) Միշա Ստեփանյանին պատկանող տարածքի 0.22կՎ էլեկտրամատակարարման շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատման հաշվետվության վերաբերյալ տրվում է դրական եզրակացություն, վերը նշված փորձաքննական պահանջների պարտադիր կատարման պայմանով:

«Շրջակա միջավայրի վրա ազդեցության
փորձաքննական կենտրոն» ՊՈԱԿ՝ գլխ. մասնագետ՝ Ա. Վարդանյան